



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Վերջին տարիներու ընթացքին, բազմաթիվ օտարերկրյա պատվիրակություններ այցելեցին Սովետական Հայաստան, ծանոթանալու համար անոր տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքին: Բոլոր պատվիրակությունները համաձայն են, որ Երևանի շինությունները բացառիկ գեղեցկություն և ինքնուրույնություն ունին: Անգլիացի կանանց պատվիրակությունը Հայաստան այցելելիս վերջ հայտարարած է, թե Երևանը աշխարհի ամենագեղեցիկ քաղաքն է:

Սովետահայ ճարտարապետները օգտագործեցին հայ ճարտարապետության հին ավանդությունը և սքանչելի հատկություն ունեցող զանազան գույնի տուֆ քարը, անոթ ստեղծեցին բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային ճարտարապետություն մը, որ առաջնակարգ տեղ մը կզբրավ: Սովետական ճարտարապետության մեջ, Երևանի Կառավարական տունը, Ստալինի մոնումենտ-քանդակը, Օպերայի և բալետի թատրոնի շենքը, նորակառույց գոց շուկան, լենինի հրապարակի ճարտարապետական անսամբլը և հարյուրավոր այլ հիմնարկություններ, գործարաններ և բնակության շենքեր իրենց գեղեցիկ ոճով և համեմատություններով Երևանին բացառիկ հմայք մը կուտան:

Հայ ժողովուրդը հինն ի վեր ծանոթ է իբրև ստեղծագործ, տաղանդավոր և փեղարվեստական ճաշակով օժտված ժողովուրդ մը:

Հայ ճարտարապետությունը, որ իր դասական կատարելության հասավ դեռևս 5-7-րդ դարերուն, Եվրոպայի գիտնականներու իսկ կարծիքով իր ազդեցությունը տարածած է Բալկաններու և Նույնիսկ արևմտյան Եվրոպայի մեջ:

Վերջերս, օգոստոս 18—21, Հայաստան այցելող գերման ճարտարապետներու պատվիրակության անդամ պրոֆ. Կ. Կլասեն, որ Գերմանական ճարտարապետության և շինարարության ակադեմիայի իսկական անդամ և Կրայֆուլտի համալսարանի արվեստի պատմության պրոֆեսոր է, պատվիրակության մյուս անդամներու կարգին խիստ հետաքրքրական հայտարարություններ քրած է: Պրոֆ. Կլասեն ի միջի այլոց հայտնած է.

«Հնում Հայաստանի արվեստը հանդիսացել է ստեղծագործական այն ակունքներից մեկը, որը Արևմտյան Եվրոպայի և իմ հայրենիքի արվեստի զարգացման ուղիներն է ցույց տվել... Իր մոնումենտալ ձևերով, հայկական ճարտարապետությունը Փոքր Ասիայի, Բյուզանդիայի և Հռոմի ճարտարապետության հետ միասին, նպաստեց Արևմտյան Եվրոպայի վաղ միջնադարյան ոճի, այսպես կոչված ռոմանական ոճի տարածմանը»:

Բացառիկ հիացումի առարկա եղած են Զվարթնոցի և Էջմիածնի եկեղեցիները: Պրոֆ. Կլասեն կգրե. «Զվարթնոցի տաճարը (է. դար) պատկանում է վաղ կառուցումների խմբին, որին որոշ չափով պատկանում է նաև Գերմանիայի առաջին մոնումենտալ կառուցումը՝ Ախենի տաճարը, որը կառուցվել է Կարլոս Մեծի ժամանակ: Սակայն նա կառուցված է միայն մոտ 800 թվականին և դեռևս չի կառուցվել (մասնաբաժանություններով) զգալիորեն կոպիտ ու աղքատ է, բան դեպի արվեստական կատարելություն ունեցող Զվարթնոցի տաճարը»:

Գերման պրոֆեսորի շահեկան հայտարարությունները անգամ մը ևս կուգան հաստատելու հայ ճարտարապետության առաջավոր դիրքը համաշխարհային գեղարվեստի պատմության մեջ:

Պետք է հիշել այստեղ, թե հայ ճարտարապետության ազդեցությունը առանձնապես զորավոր եղած է Ռոմանիո մեջ: Ֆրանսացի գիտնական Օգյուստ Շուազի, իր «Ճարտարապետության պատմություն» երկին մեջ կգրե. «Դանուբի հովիտին, Սերբիո, Վալակիո և Մոլդավիո մեջ զարդաքանդակներու հայկական բնույթը ալ ավելի շեշտված է...: Կուրտեա դե Արճեշի, Տրկովիշտեի, Թրակոմիրնայի եկեղեցիները շունին ոչ մեկ զարդաքանդակ (օրնամենտ), որ Հայաստանին

դուրյունները, ստեղծած են այնպիսի գեղեցիկ շինություններ, որ բոլոր օտար հյուրերու հիացմունքին կարժանանան: Սակայն, սովետահայ ճարտարապետությունը դեռ իր վերջին խոսքը չէ ըսած և Երևանի զարգացման 15-ամյա պլանը հույակապ հեռանկարներ կբանա անոր առջև:

Խոսելով նաև գերման ճարտարապետներու ձգտումի մասին՝ օգտագործելու սովետական ճարտարապետության առաջատար փորձը, պրոֆ. Կլասեն հարած է. «Ինչ



Գերմանական ճարտարապետների պատվիրակությունը Զվարեցում

չպատկանի, դեկորատիվ ճարտարապետության տեսակետին ներքին Դանուբի հովիտը կնմանի հայ գաղութի մը...»: Այս կարծիքը հաստատած են բազմաթիվ ուսման գիտնականներ ևս, ինչպես՝ Ալ. Օդոբեակու, Գեորգե Բալշ, Տոչիլևսկու, Բոկդան Պետրիչեյու, Հաշրեու և ուրիշներ: Հաշրեու նույնիսկ կապացուցանե թե՛ Ռոմանիո ճարտարապետական վոթոլներեն մին հանդիսացող Կուրտեա դե Արճեշի եկեղեցին հայերու գործ է և կկրե հայ ոճին զորավոր դրոշմը:

Սովետահայ ճարտարապետները ստեղծագործորեն ստեղծագործելով հին ավան-

թիվում էր, որ այդ բնագավառում առանձնապես ուսանելի է Հայաստանի օրինակը, որովհետև հնադարյան տրադիցիաների կենդանի ստեղծագործական շարունակումը, այստեղ հատկապես լրիվ է հաջողվել:

Այսպես ուրեմն, օտար մասնագետներու վկայությամբ ևս կհաստատվի սովետական ռեժիմի շնորհիվ վերածնված հայ ժողովուրդի ստեղծագործ խաղաղ շինարարության փաստը:

Տ. Տ. Գ.

(Վերցված Բուխարեստի «ՆՈՐ ԿՅԱՆՔ»
թերթից)


ԱՎԱՏՐՈՒՄՈՎԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հինգ օր շարունակ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում հյուր էր Ավստրո-սովետական ընկերության ղեկավարները: Դեկտեմբերի մեկնուկից առաջ Հայկական հեռագրական գործակալության թղթակիցը զրույց ունեցավ ղեկավարների հետ, որը ասաց.

— Մենք Հայաստան ենք ժամանել ոչ պատահաբար: Մինչև այժմ ավստրիական շատ ղեկավարներ են եղել Մոսկվայում և Սովետական Միության խոշոր քաղաքներում, բայց, դժբախտաբար, ձեր ռեսպուբլիկայում դեռևս չէին եղել նրանք: Տարակույս չունենալով այն բանում, որ մեր հայրենի-

Մենք հիացած ենք, որ լեռնային Հայաստանի աշխատավորներին բնական դժվարին պայմաններում հաջողվել է կարճ ժամանակամիջոցում վիթխարի հաջողությունների հասնել իրենց նյութական և հոգևոր կյանքում:

Նոր կյանքը ծաղկում է ոչ միայն հայկական քաղաքներում, այլև գյուղերում: Մենք նրանք Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղում: Ափսոս որ մեզ հետ չկային ավստրիական գյուղացիներ: Նրանք ուսանելի շատ բան կտեսնեին գյուղում: Առաջին հերթին աչքի է ընկնում գյուղատնտեսական աշխատանքի մեքենայացումը, գյու-



Ավստրիական պատվիրակությունը Ս. Էլմիածնի Մայր Տաճարում

կիցների համար անշափ հետաքրքրական կլինի իմանալ, թե ինչպես է ապրում, աշխատում, նոր կյանք կառուցում հայ ժողովուրդը, մենք ձեռնարկեցինք այս ուղևորությունը:

Մի քանի օրվա ընթացքում մենք շատ բան տեսանք: Մեզ ապշեցրին Հայկական ռեսպուբլիկայի աճի տեմպերը, այդ աճի խորապես կշռադատված պլանայնությունը:

ղացիների աշխատանքը դյուրացնելու նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը: Այդ բանը, իհարկե, չկա մեզ մոտ: Ավստրիական հսկայական թվով գյուղացիներ, որոնք միջակ ու մանր տնտեսություն ունեն, զրկված են մեքենայական տեխնիկայից օգտվելու հնարավորությունից, իսկ հողագույր բատրակ-գյուղացիները հեծում են շահագործման ծանր լծի տակ: Բամբակա-

շատը լիովին էլեկտրիֆիկացված և ռադիոֆիկացված է: Դա, ըստ էության, մի փոքրիկ քաղաք է իր միջնակարգ դպրոցով, հիվանդանոցով, ծննդատնով, ակումբով և կուլտուր-կենցաղային այլ հիմնարկներով: Մեզ ասացին, որ Բամբակաշատի կոլտնտեսությունը այս տարի վաստակել է 8,5 միլիոն ռուբլի, որ Հայաստանում տարեցտարի աճելանում է միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը: Այդպիսի եկամտատնետով, բնականաբար, կոլտնտեսականները կարող են ապահով կյանք ունենալ և վստահորեն նախել ապագային:

Նոր կյանքի բաբախումը, նրա դինամիկան մենք զգացինք ամենուրեք: Երևանի կաշվի գործարանում մենք իմացանք, որ դա նախատեսված ժամանակաշրջանում քաղաքի փոքրակիվ ձեռնարկություններից մեկն էր և այն ժամանակ ոչնչով չէր տարբերվում տնայնագործական արհեստանոցից: Մինչդեռ այժմ նա ժամանակակից մի խոշոր գործարան է՝ հագեցված նորագույն տեխնիկայով: Այստեղ ևս, ինչպես նաև կոլտնտեսությունում մենք տեսանք այնպիսի փաստեր, որոնք խոսում են մարդու նկատմամբ ցուցաբերվող լուրջ հոգատարության մասին: Բանվորների համար ի պայս են դրված ճաշարան, ակումբ, ցնցուղ-լողարան, հիանալի պտղատու այգի: Բանվորուհիները իրենց երեխաները բերում են մանկատան, մանկապարտեզ և հանգիստ սրտով աշխատում են գործարանի ցեխերում:

Այդ կապակցությամբ ցանկանում եմ խոսել Արզնի սանատորիայի մասին, որտեղ, ըստ երևութի, եղել են ոչ քիչ թվով կաշեգործ բանվորներ: Դա անչափ բարեկարգ մի բանատորիա է, որտեղ բուժիչ ջրի օգտագործումը հաջողությամբ զուգակցվում է բուժման ժամանակակից մեթոդներին: Արզնիի ապահովված է տնհրաժեշտ ապարատներով և հիվանդներին էֆեկտիվ օգնություն ցույց տալու համար բոլոր պայմաններով:

Եթե Հայաստանը անցյալում եղել է հետամնաց գյուղատնտեսական երկիր, ապա այժմ նա ինդուստրիալ ռեսպուբլիկա է: Արդյունաբերական ցուցահանդեսում մենք դիտեցինք բարդ հաստոցներ, տրանսֆորմատորներ, էլեկտրական մոտորներ, կոմպրեսորներ և արդյունաբերական արտադրանքի շատ այլ տեսակներ, որ թողարկում են Երևանի գործարանները: Այդպիսի արտադրանք տալու համար գրադիրություն, կուլտուրա է պետք: Իսկ ժողովրդի կուլտուրայի բարձրացմանն այստեղ նվիրվում է իսկապես հուզիչ ուշադրություն: Վերցնենք թեկուզ պատկերասրահը, որին հատկացվել են հսկայական դահլիճներ: Ոչ բոլոր քաղաքները, նույնիսկ Երևանից մեծ քաղաքները,

ունեն անցյալ ժամանակների և այժմյան վրձինի վարպետների ստեղծագործությունների այդպիսի հարստություն: Մենք դիտեցինք նաև Հայաստանի նկարիչների ցուցահանդեսը: Մեզ ուրախացրին նկարների վառ գունագեղությունը, կոմպոզիցիայի հստակությունը, նկարիչների ձգտումը՝ ճշտությամբ արտացոլելու շրջապատող իրականությունը: Այդ նկարներից շատերը հաջողությամբ կարող էին ներկայացվել սոցիալիստական երկրի ուղած ցուցահանդեսում:

Հայ ժողովուրդը ոչ միայն նոր կյանք ու կուլտուրա է կերտում, այլև խնամքով պահպանում է իր հինավուրց հուշարձանները, լայնորեն օգտագործում է վրասիկ ժառանգության լավագույն նմուշները: Այդ բանում մենք համոզվեցինք, երբ դիտեցինք Երևանը, որտեղ ճարտարապետները, վերամշակելով անցյալ ճարտարաբանության ամենաարժեքավոր հուշարձանները, վեր են խոյացնում իրենց գեղեցկությամբ ինքնատիպ շենքեր: Այդ բանը նկատվում է նաև պատկերասրահում, որտեղ սովետական նկարիչների գործերի կողքին ցուցադրված են հին վարպետների ստեղծագործությունները: Դա նկատելի է Գեղարվեստի ինստիտուտի ռաբանաբանի աճող դրվածքում, որտեղ ապագա նկարիչներին դաստիարակում են կրասիկ ժառանգությունը հարգելու ոգով: Անցյալ դարերի լավագույն տրադիցիաների նկատմամբ այդպիսի սիրալիր վերաբերմունքը լիակատար ակներևությամբ մենք տեսանք, երբ այցելեցինք հայկական հին ձեռագրերի պետական գրադահոցը՝ Մատենադարանը: Այստեղ պահվում են հսկայական արժեք ունեցող ունիկալ ձեռագրեր: Մատենադարանի դռները բաց են ոչ միայն գիտնականների, այլև ստանող երիտասարդության համար, որը անդուլ վերադավ հարստացնում է իր գիտելիքները, տեղ-ուշով ուսումնասիրում է անցյալի պատմության էջերը: Ներկայումս Երևանում կառուցվում է Մատենադարանի համար նոր շենք, որտեղ առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեն հավաքյալ ձեռագրերի պահպանման համար:

Զրույցի վերջում Ավստրո-սովետական բնկերության դեղագիտի դեկավար Ա. Բերանեկը ասաց.

— Սովետական Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի միջխառն վերելքը ակներև է մեզ համար: Բայց մեզ ամենից ավելի հիացրին մարդիկ, բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան՝ նոր կյանք ստեղծողները: Ամենուրեք մենք տեսանք ազնիվ դեմքեր, սրտաբաց մարդկանց, որոնք պատրաստ

էին օգնել մեզ՝ ավելի խորացնելու մեր ստացած հարուստ տպավորությունները: Մենք ի սրտե շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր մեզ լայն հնարավորություններ տվեցին կատարելու մեր ստանձնած միսիան՝ ծանոթանալու վերածնված հայ ժողովրդի կյանքին: Թող հավատան մեզ, որ մեզ մոտ՝ հայրենիքում, Ավստրիայում, մենք պատշաճ խոսքեր կգտնենք պատմելու համար, թե որքան ազնի-

վորեն է աշխատում և ինչպիսի երջանիկ կյանք ունի հայ ժողովուրդը: Աշխարհի բոլոր ազգերի և ուսանների ներկայացուցիչները հավաքվում են խաղաղության պաշտպանության ժողովուրդների վեճաբանին: Մենք հպարտ ենք, որ կոնգրեսը տեղի կունենա մեր երկրի մայրաքաղաքում՝ Վիեննայում: Խորապես հավատում ենք, որ կոնգրեսը մեծ ավանդ կլինի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարում:

ԼԵՂ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

— Սովետական Հայաստան այցելելուց հետո ամսմոռանալի հանդիպումներն ընդմիջող լիման մեր հիշողության մեջ: ՁՅ-ամյա պրոֆեսոր, կոլտնտեսուհի աղջիկ, որը թափանցիկ է հողի արգավանդության գաղտնիքները, հասարակ բանվոր, որը վստահորեն կարդում է բարդ գծագրեր, ասես նա բանվոր չէ, այլ ինժեներ, պատանիների ուրախ սերունդը՝ կարմիր լվկապներով, ուսանողներ, ստախանովականներ, կոլտնտեսականներ, արտիստներ, բժիշկներ... Այդ մարդկանցից յուրաքանչյուրը — իսկ այդպիսի մարդկանց մենք շատ տեսանք Հայկական ՍՍՌ-ում մեր դեղագացիայի գնմվելու հինգ օրվա ընթացքում — մարմնացնում են նոր կենցաղի գծերը, սոցիալիստական իրականության գծերը, — Հայկական Հեռագրական Գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցում հաղորդեց լեհ-սովետական բարեկամության ընկերության դեղագացիայի ղեկավար, ընկերության նախագահի տեղակալ Ստեֆան Մատուշեկին:

Եթե հարկ լինի մեկ բառով բնութագրել այն տպավորությունը, որ ժամանողների վրա թողնում են Հայաստանի քաղաքների և գյուղերի բնակիչների հետ ծանոթանալը և այդ մարդկանց ստեղծարար գործերը, ապա այդ բառը կլինի՝ վեներաբիլություն:

Ժողովրդի ստեղծագործական հզոր եռանդի մեջ այնքան ցայտուն կերպով իր արտահայտությունը գտած այդ կենսուրախությունը է՛լ ավելի ազդու է դառնում, եթե հիշենք, որ խոսքը վերաբերում է երկրազնդի հնագույն ժողովուրդներից մեկին, որի ուսերին դարեր շարունակ ծանրացել է անողորմ ճակատագիրը: Մենք հասկանում ենք, որ Սովետական Հայաստանում մեր հանդիպած ամենատարբեր պրոֆեսիաների, հասակների ու կուլտուրական մակարդակի մարդկանց լավատեսությունը, նրանց հաստատական վստահությունը դեպի ապագան, նրանց աշ-

խատանքային եռանդը նոր, երջանիկ կյանքի ծնունդն է:

Մեզ մոտ, Լեհաստանում, քիչ չէ հայերի, այդ ազնիվ աշխատավորների թիվը: Նրանք սերունդն են այն թափառականների, որոնք դարեր շարունակ շրջում էին աշխարհում լավագույն բախտ որոնելու համար: Անցյալում նրանց հանդիպելիս մենք լսում էինք նրանց երգերը՝ թախծության ու վշտի երգերը: Բայց այդպիսի երգեր մենք չսեցինք Սովետական Հայաստանում: Նոր կյանքը ծնունդ է տվել նոր երգերի: Եվ դրանք երջանկության երգեր են:

Օրեցօր և քաջ առ քաջ ծանոթանալով Սովետական Հայաստանին, Լեհ-սովետական բարեկամության ընկերության դեղագացիայի անդամները հիանալի, օգտակար և ուսանելի շատ բան գտան լեհ ժողովրդի համար՝ նոր Լեհաստանի կառուցողների համար: Մեզ, անշուշտ, ամենից ավելի հետաքրքրում էր այն, թե հայ ժողովուրդը ինչպես է պահպանում և կառուցում իր կուլտուրան՝ բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան: Որոշ ընդհանուր գծեր կան հայ և լեհ ժողովուրդների պատմական անցյալում: Թեև Հայաստանը մեր երկրից հեռու է գտնվում, հայ ժողովրդի հարուստ կուլտուրան մոտ է և հասկանալի է մեզ համար:

Հիասքանչ Երևանում կատարած մեր էքսկուրսիաներից, ռեսուրսիկայում մեր ուղեորություններից և բաղամթիվ մարդկանց հետ շփվելուց հետո մենք հաճախ ասում էինք միմյանց. որքան լավ է, որ Հայաստանում սիրում են և գիտեն ուսուց հիանալի լեզուն, որ այն համառորեն ուսումնասիրում են ամենուրեք, և դրա հետ միասին, ժողովուրդը որքան խնամքով պահպանում է իր մայրենի լեզվի հարստությունները, որքան սիրով զարգացնում է այն: Այդ բոլորը մեզ վրա ուժեղ տպավորություն գործեց:

Հայաստանում գոյություն ունեն մի շարք հիմնարկներ, ինչպես, օրինակ՝ Հին ձեռագրերի պետական գրապահոցը (Մատենադարանը), որտեղ խոր կերպով աշխատանքի վրա են հնագրության կոպտորայի փաստաթղթերը: Իսկ դրա հետ միասին ռեսպուբլիկայում որքան բազմաթիվ են հասել ժողովուրդների կրթությունը, գիտությունը, արվեստը: Ինքնատիպ և բարձր արվեստի այն նմուշները, որոնց մենք ծանոթացանք, առաջ են բերում բերկրանքի զգացմունքներ: Պետական համալսարանում, ուր եղանք մենք, և որտեղ դասավանդումը կատարվում

սոցիալիստական ինդուստրիայի ձեռնարկություններում, թե՛ կոլտնտեսություններում, թե՛ կոլտնտեսություններում, թե՛ ուսումնական հաստատություններում, թե՛ գիտական հիմնարկներում: Ամենուրեք աչքի է ընկնում հմուտ պլանավորումը, տնտեսական խնայողությունը, իմաստով կանխատեսումը և գործի լայն թափը: Արտաշատի ՄՏ կայանում, որտեղ եղանք մենք, և Ջերմինակու անվան հաստոցաշինական գործարանում, որտեղ դիեզայնի անցկացրեց մի քանի ժամ, մեզ հատկապես դուր եկավ այն, որ մարդկանց աշխատանքը խելացիորեն կազմակերպված է



Լեն պատվիրակությունը Երևանի Պետական մատենադարանում

է հայերեն, զարմացնում են լայն մասշտաբները, ուսման հիանալի դրվածքը: Իսկ ինչպիսի գիտական կադրեր են պատրաստված Հայաստանում՝ ուսա մեծ ժողովրդի օգնությամբ: Այդ ամենը արժանի է հիացմունքի: Մենք ակնհերե կերպով համոզվեցինք, որ Սովետական իշխանության պայմաններում վերածնված հայ ժողովրդի կյանքը հանդիսանում է լեռնայան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության հաղթանակի վառ վկայությունը:

Սրապեսց հյուրընկալությունը, որը, բաց երևույթին, հայ ժողովրդի տարբերիչ գիծն է, մեզ հնարավորություն տվեց լինել թե՛

գիտական հիմունքներով: Բոլոր աշխատողները հիանալի կերպով գիտեն իրենց գործը և հմտորեն տիրապետում են առաջավոր տեխնիկային: Աշխատանքի ռացիոնալիզացիան կատարվում է հաստատակամորեն ու պլանաչափորեն: Եվ ամեն տեղ տիրում է օրինակելի կարգապահություն:

Մեզ զարմացրեց այն համարձակությունը, որով Սովետական Հայաստանում բուծվում է տնտեսական ամենաբարդ պրոբլեմներից մեկը՝ ջրի պրոբլեմը: Դվին գյուղի կոլտնտեսականները մեզ պատմեցին ուղղման այն հզոր սխառմի մասին, որին սնում է բարձր լեռնային Սևանա լիճը, այն մասին,

թե ինչպես դարերով ներհող այդ լճի ջրերը աշխատեցնում են հզոր հիդրոէլեկտրակայաններ: Այդպիսի հաջողությունների կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ բանվորները և կոլտնտեսականները գիտնականների հետ աշխատում են սերտ համագործակցությամբ՝ ի բարօրություն Հայրենիքի: Հիանալի է, որ Հայաստանում գիտությունը այդքան մոտ է կանգնած կյանքին և թափանցում է ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները:

Վերադառնալով հայրենիք, մենք լեհ գիտնականներին կպատմենք Սովետական Հայաստանի գիտնականների բեղմնավոր գործունեության մասին, լեհ ճարտարագետներին կպատմենք Խոշանի շինարարության հզոր թափի մասին, լեհ բանվորներին՝ սովետական լինդոստրիալ ձեռնարկությունների առաջավոր տեխնիկայի մասին, այն մարդկանց մասին, որոնք չարձև են այդ տեխնիկայի սերերը, լեհ գյուղացիներին կպատմենք Հայաստանի խոշորագույն կոլտնտեսությունների հիանալի նորակառույցների մասին, այն մասին, թե հայ գյուղի մարդիկ ինչպես են սովորում, աշխատում, սիրում դիտությունը և համագործակցում

գիտնականների հետ, արտիստներին և նկարիչներին կպատմենք հայ ժողովրդի ծաղկող արվեստի մասին, լեհ ուսանողներին՝ ուսման մեջ մեր նկատած ջանասիրության մասին, փակ մեր երեխաներին կպատմենք, թե ինչպիսի ուրախ և իսկական ստեղծագործական աշխատանք է եղում Երևանի Պիոներների պալատի բազմաթիվ խմբակներում: Մենք կպատմենք Սովետական Բանակի նախկին հայ ռազմիկների հետ ունեցած մեր հուզիչ հանդիպման մասին, այն Բանակի, որը մեր հայրենի Լեհաստանը ազատագրեց հիտլերյան լծից:

Մենք Սովետական Հայաստանից մեկնում ենք դեպի նրա ժողովուրդը տնեցած բարձր հարգանքի զգացմունքով, ժողովուրդ, որը սովետական համերաշխ ընտանիքում այդպիսի մակարդակի է հասցրել իր էկոնոմիկան ու կուլտուրան, մեր շնորհակալությունը հայտնելով նրան՝ որոշողին հյուրընկալության համար:

Լեհ-Սովետական բարեկամության ընկերության դեյեզացիան, որ բաղկացած է 12 մարդուց, դեկտեմբերի 23-ին Երևանից մեկնեց Մոսկվա:

ԺՈՐԺԻ ԱՄԱԴՈՒ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՆԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԵՐԿՐԱՆՔԻ ԵՐԿԻՐ Է՝

Ես տեսա Հայաստանի ժողովուրդին, որը կոմունիզմ է կառուցում: Եվ երբեք չեմ մոռանա այն օրերը, որ անցկացրեցի Երևանում, Հայաստանի աշխատավորների մեծ ընտանիքի հետ եղբայրական բարեկամությամբ: Այդ օրերին ես լավ իմացա, թե ժողովրդի համար ինչ է նշանակում լինել իր բախտի տերը, թե ինչ է նշանակում սոցիալիստական կարգը ազգի պրոգրեսի համար:

Այդ ժողովուրդը, որը անցյալում այնքան շատ պայքարել է ու տառապել, եղել է բազմադարյան դաժան ճնշման զոհ և ցրվել է ամբողջ աշխարհով մեկ, այդ ժողովուրդը Հոկտեմբերյան Մեծ ռեվոլյուցիայի շնորհիվ նորից ձեռք բերեց անկախություն և հայրենի հողում իր կյանքը կառուցելու իրավունք: Ուստի և այնքան վառ են փայլում հայրերի աչքերը և ուրախության ժպիտով են լուսավորվում նրանց դեմքերը, երբ արտասանում են այնքան սիրելի Լենինի և Ստալինի

անունները, սոցիալիստական նոր աշխարհի ստեղծողների ու կառուցողների անունները: Վերջապես, հայ ժողովուրդը, ուսա ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների օգնությամբ, կարողացավ խաղաղության մեջ կառուցել իր երջանիկ բախտը:

Այդ երկիրը, որը դեռ ոչ հեռավոր անցյալում ստրկացված էր և ավերված, ներկայումս բարձր ինդուստրիայի երկիր է և նրա գործարաններն ու ֆաբրիկաները վկայում են այն հսկայական փոփոխությունների մասին, որ տեղի են ունեցել վերջին երեսուն տարում: Դաշտերը, որ անցյալում լքված էին, այժմ հայրական կոլտնտեսությունների առատության դաշտեր են: Մարդիկ, որոնք անցյալում անգործ էին, սուզված գիշերային խավարի մեջ, այժմ այնքան բարձր և մարդասիրական կուլտուրայի տերեր են: Երկրի ներկվա հետամնացությունը այժմ պահպանվել է միայն որպես անցյալի տխուր հիշողություն: Այսօր կոմկոսսում բարձրանում է հզոր, առատ, կուլտուրական, ազատ Հայաստանը՝ սովետական ժողովուրդների խաղաղ ու երջանիկ կյանքի ակտիվ

1. Այս և հաջորդ գրությունների հեղինակները Հայաստան այցելած բրադիլիական պատվիրակության անդամներ են:—ԽՄԲ: